

ՎԱՐԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆՆԵՐԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի անկախության վերականգնումը 9-րդ դ. վերջին և ավելի քան մեկ ու կես հարյուրամյակի խաղաղ, ստեղծագործ աշխատանքի պատմափուլում տնտեսության հետ հուժկու վերելք ապրեց նաև մշակույթը, այդ թվում ուսումնականության բնագավառը:

Ստեղծվեցին նախորդը չունեցող բարձրագույն դպրոցներ՝ վարդապետարաններ: Դրանք գիտակրթական կենտրոններ էին, որոնք ավարտելով սաները ստանում էին վարդապետական աստիճան, իսկ դա համարվում էր գրագիտության, գիտնականության բարձր տիտղոս: Ոչ միայն սովորական վարդապետները, այլ անգամ եպիսկոպոսներն էին ստանում վարդապետական աստիճան:

Բարձրագույն այդ դպրոցներում ուսուցանվել են «յոթ ազատ արվեստները» կամ գիտության յոթ ճյուղերը՝ բաժանված երկու մասի: Հասարակական գիտությունների ոլորտն ընդգրկող եռյակ բաժնում սովորում էին քերականություն, ճարտասանություն և տրամաբանություն: Ճշգրիտ գիտություններն ընդգրկող քառյակ բաժնում ուսուցանվում էր թվաբանություն, երկրաչափություն և երաժշտություն:

Վարդապետարաններում ուսման տևողությունը սահմանվում էր 7-8 տարի: Նրջանավարտը պարտավոր էր քննություններ հանձնել անցած դասընթացից: Դրանից զատ նա ավարտաճառ էր ներկայացնում, որի պաշտպանությունը կատարվում էր հրապարակավ, հատուկ հանձնաժողովի միջոցով¹:

Բարձրագույն այդ դպրոցները միաժամանակ գիտական կենտրոններ էին: Ուսուցման հետ մեկտեղ այնտեղ գիտական գործունեություն էր ծավալվում: Ձեռագրեր էին ուսումնասիրում, աշխատություններ գրում, արտագրում, դասագրքեր ստեղծում, այլ խոսքով զբաղվում մատենագիտությամբ: Թարգմանում էին անտիկ հեղինակների գործերը, մեկնություններ կատարում, արտագրում, բազմացնում ու տարածում: Ձեռագրերի ստեղծման, արտագրության, դրանցով ուսուցանելու գործնական պահանջի թելադրանքով էական տեղ էր տրվում բանասիրությանը:

¹ Տես Լ. Խաչիկյան, «Գլաձորի համալսարանը և նրա սաների ավարտական ատենախոսությունները», Պետական համալսարանի գիտական աշխատություններ, հ. 23, 1946, էջ 434:

Ուսումնագիտական այդ կենտրոնները գլխավորում էին ժամանակի նշանավոր գիտնականները: Նրանք անվանվում էին վարդապետեր, ռաբունապետեր, ուսուցչապետեր, դպրապետեր:

Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաք Անիում անվանի գիտնական, ուսուցչապետ Գրիգոր Մագիստրոսը ճեմարան էր կազմակերպել: Հայտնի է Սանահինի կրթական կենտրոնը, որտեղ դասընթացները անց են կացվել «Մագիստրոսի ճեմարան» կոչվող սրահում:

Անիի վարդապետարանը ծաղկում ապրեց 12-րդ դարում Հովհաննես Իմաստասերի շնորհիվ: Նա համակարգեց վարդապետարանի ուսումնական ծրագրերը, կազմեց հանձնարարելի գրքերի ցանկը, որը հայտնի է «Սարկավագյան մատենացանկ» անունով:

Խոր գիտելիքներ էր տալիս Կարսի վարդապետարանը: Դրա սաներից էր Գագիկ Ա. Թագավորը (990-1020), որին Մատթեոս Ուռհայեցին բնութագրում է որպես հմուտ փիլիսոփա և լավագույն ճարտասան:

Նշանավոր էր Ռշտունյաց գավառի Նարեկա վանքի գիտաուսումնական կենտրոնը՝ անվանի մանկավարժ, աստվածաբան Անանիա Նարեկացու գլխավորությամբ: Այդ դպրոցի սանն էր Գրիգոր Նարեկացին:

Հաղպատի ուսումնագիտական կենտրոնը նշանավոր է եղել և գործել է ամբողջ երեք հարյուրամյակ՝ 11-13-րդ դարերում: Այնտեղ կատարվում էին մատենագրական-գիտական բեղուն աշխատանքներ: Հաղպատում ծանրակշիռ ավանդ ունի մեծանուն գիտնական Հովհաննես Իմաստասերը (Հովհաննես Սարկավագը), որն իր մտավոր գործունեությամբ այդ կենտրոնը զարգացման գագաթնակետին հասցրեց: Գարեգին Հովսեփյանը գտնում է, որ Հաղպատում ստեղծագործական այնպիսի կյանք կար, ուսուցիչների և աշակերտների այնպիսի բազմություն, ուր պետք է որ ծաղկեր նաև գրչության արվեստը²:

12-13-րդ դարերում արգասավոր էր Նոր Գետիկի կամ Գոշավանքի վարդապետարանը: Այդ կենտրոնի ուսուցչապետ Մխիթար Գոշի համբավը տարածված էր և շատ շատերն էին գալիս նրա մոտ ուսանելու: Ուսումնարանի սան, նշանավոր պատմիչ Կիրակոս Գանձակեցին վկայում է այդ մասին: Նա գրում է. «Բազումք էին, որ աշխատեցան ի նմանէ վարդապետական բանին, քանզի համբաւ իմաստութեան նորա հռչակեցաւ ընդ ամենայն տեղիս»³: Նրա աշակերտներից շատերը այլ վայրերում դպրոցներ բացեցին և շարունակեցին մտավոր գործունեությունը:

² Գ. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի ու մշակույթի պատմության, պր. Ե, Երուսաղեմ, 1935, էջ 68-70:

³ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Օհանջանյանի, Եր., 1961, էջ 217:

Գիտակրթական մարզի բարեփոխումներն ու առաջընթացը նույն ձևով իրականանում էր նաև Կիլիկիայում:

Կիլիկիայի հայկական պետության մայրաքաղաք Սիսը մտավոր նշանավոր կենտրոն էր: Այնտեղ հիմնվել էր բարձրագույն դպրոց-համալսարան, ուր հրավիրվել էր Հովհաննես Երզնկացին (Պլուզ) և կարգում էր քերականություն: Սսի վարդապետարանում մեծ էր նշանավոր փիլիսոփա Վահրամ Բաբունու գիտամանկավարժական վաստակը: Լևոն Ա Մեծագործը, նրա գործը շարունակող Հեթում Ա թագավորը հոգ էին տանում գիտաուսումնական այս կենտրոնի նկատմամբ⁴:

Հռոմկլա սահմանային բերդ-ամրոցում, երբ այն դարձավ հայրապետական աթոռանիստ, ստեղծվում է Դպրեվանք, ուր ուսումնամանկավարժական բեղմնավոր աշխատանք էին կատարում Գրիգոր Գ Պահլավունի Փոքր Վկայասեր հայրապետը և նրան փոխարինող Ներսես Շնորհալին: Կարճ ժամանակում նրանք Դպրեվանքը դարձնում են գիր ու գրականության նշանավոր կենտրոն⁵:

Ուսումնաբերաժշտական գրչության նշանավոր կենտրոն էր Դրազարկը: Մանրանկարչության նշանավոր դեմքերից Սարգիս Պիծակը Դրազարկի սանն էր: Այս մտավոր կենտրոնն աչքի էր ընկնում երաժշտական կրթության և լեզուների ուսուցման բարձր մակարդակով: «Այս ամենը ցոյց կուտան, - գրում է Ա. Ալպոյաճյանը, - թէ Դրազարկի վանքը պարզ մենաստան մը չէր, այլ ուսումնարան մը, որ փալլած է ԺԲ դարէն մինչև ԺԴ դարուն կէսերը»⁶:

Սկեռայի վանքում գործել է նշանավոր ուսումնարան, ուր ուսուցիչների և աշակերտների մի ամբողջ խումբ Ներսես Լամբրոնացու գլխավորությամբ մատենագիտական լուրջ աշխատանքներ էին կատարում⁷:

Կիլիկիայի Առ լեռան Պահլավունի, Արեգի, Ուլինի, Մարաշի, Ընկուզուտի, Շաքիրի և մյուս վարդապետարանները մեծ համբավ ունեին: Իրենց գիտելիքները հարստացնելու, խորացնելու նպատակով Հայաստանից մասնագետները մեկնում էին Կիլիկիայի գիտական կենտրոններ, ինչպես վարվեց Մխիթար Գոշը:

Միջնադարյան Հայաստանի բարձրագույն դպրոցների մեջ նշանավոր է հատկապես Գլաձորի համալսարանը: Այն հիմնադրվել է 1282 թ. Վարդան Արևելցու սան Ներսես Մշեցու կողմից: Նա մշակում է ուսման ծրագիրը, հավաքագրում խոստումնալից աշակերտներ, կենտրոնն ապահովում լավ դասախոսներով: Մշեցին իր սաներից Եսայի Նչեցուն ձեռնադրում է վարդապետ: Իր մահից հետո (1284 թ.) Նչեցին դառնում է ուսուցչապետ և երկար տասնամյակ-

⁴ Տե՛ս Լ. Խաչերյան, Հայագիր դպրության ուսումնասիրության կենտրոնները, դպրոցները, դպրեվանքերը, վարդապետարանները, ձեմարանները, ակադեմիաները և համալսարանները միջնադարյան Հայաստանում և Կիլիկիայում (V-XVI դդ.), Լիզպոն, 1998, էջ 449:

⁵ Նույն տեղում, էջ 295-298:

⁶ Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ դպրոցի, հ. Ա, Գաֆիթե, 1946, էջ 209:

⁷ Նույն տեղում, էջ 208-210:

ների ընթացքում ձեռք բերում վիթխարի հաջողություններ: Գլաձորի համալսարանի հոշակը տարածվում է ամբողջ Հայաստանում: Ժամանակակիցները նրան «երկրորդ Աթենք» են համարել: Գլաձորի ուսումնագիտական կենտրոնը ժամանակակիցներն ու հայագետները համարել են համալսարան:

«Յոթ ազատ արվեստների» ուսուցումը կատարվում էր պատշաճ մակարդակով:

Եռյակ ուսուցման առաջին անհրաժեշտ առարկան քերականությունն էր: Այդ առարկայով գիտելիք էր հաղորդվում ոչ միայն լեզվի առանձնահատկությունների, օրինաչափությունների, այլ նաև գրականության տեսության, արվեստի իմաստասիրության, ճարտասանության, երաժշտության վերաբերյալ: Այդ պատճառով էլ քերականությունը որպես ուսումնական հիմնական առարկա դրված է եղել ինչպես եվրոպական, այնպես էլ Հայաստանի միջնադարյան համալսարանների ուսուցման ծրագրերի հիմքում: Գլաձորի համալսարանում որոշակի չափով առաջ մղվեց քերականական միտքը: Նրա սաներից շատերը դպրոցներ հիմնեցին իրենց ծննդավայրերում և շարունակեցին ու խորացրին Գլաձորի ավանդները⁸: Այս առարկան ուսուցանվում էր հիմնականում Եսայի Նչեցու «Վերլուծություն քերականութեան» աշխատությամբ:

Գ. Հովսեփյանը ծանրակշիռ աշխատություն է համարում Եզեկիելի մեկնությունը, որը նա գրել է Ստ. Օրբելյանի պատվերով: Նչեցու այդ գործը նշանավոր է առատ աղբյուրների օգտագործմամբ:

Եռյակ ուսուցման երկրորդ առարկան ճարտասանությունը կամ հռետորությունն էր: Այն գիտելիքներ էր տալիս նաև գրական ստեղծագործության, ոճաբանության, գեղագիտության վերաբերյալ: Այդ առարկան սովորեցնում էր ճառ, քարոզ, պաշտոնական ուղերձներ, նամակներ գրելու արվեստը: Ճարտասանությունը պատշաճ էր մատուցվում հենց նրանով, որ Մովսես Խորենացուն վերագրվող «Գիրք Պիտոյից»-ը քանիցս ընդօրինակվել է Գլաձորի համալսարանում: Ճարտասանությունը ոչ միայն պերճախոսության, այլև համոզելու արվեստ էր: Այդ պատճառով պահանջվում էր, որ ճարտասանը մեծ պատրաստություն, լայն մտահորիզոն ունեցող անձնավորություն լիներ: Նույն եղանակով ու խորությամբ ուսուցանվում էին եռյակ ու քառյակ ծրագրերի մյուս առարկաները:

Պոռչյանների և մյուս իշխանական տների նկատմամբ մոնղոլական պետության հալածական նոր քաղաքականության հետևանքով փակվում է Գլաձորի համալսարանը 1338 թ. Եսայի Նչեցու մահից հետո:

Գլաձորի ուսումնագիտական ուժերը իրենց գործունեությունը շարունակում են Վայոց Ձորի Հերմոնի վանքում, որտեղ համալսարանի ռաբունապետ է

⁸ Տե՛ս Ս. Արևշատյան, Ա. Մաթևոսյան, Գլաձորի համալսարանը միջնադարյան Հայաստանի լուսավորության կենտրոն, Եր., 1984, էջ 29:

կարգվում Հովհան Որոտնեցին: Ապա նա իր ուսումնական թանկանշատ գործունեությունը շարունակում է Տաթևում և Որոտնավանքում մինչ 14-րդ դարի 80-ական թվականների վերջերը: Նրան փոխարինում է Գրիգոր Տաթևացին: Վերջինս մատենագիտական, ուսումնամանկավարժական, հասարակական լայն գործունեություն է ծավալում: Նա 1409 թ. վարդապետական աստիճան է տալիս իր 10 սաներին, որոնք Տաթևի համալսարանի վերջին շրջանավարտներն էին:

Տաթևացու երկու աշակերտները Թովմա Մեծոփեցին և Հովհաննես Հերմոնեցին կատարեցին իրենց ուսուցչի ցանկությունը՝ ամենայն հայոց կաթողիկոսությունը վերահաստատեցին իր օրինական տեղում՝ Վաղարշապատի Ս. Էջմիածնի վանքում⁹:

Անշուշտ Հայաստանի բազմաքանակ բարձրագույն դպրոցները բոլորը չէ, որ Գլաձորի կամ Տաթևի համալսարանների մակարդակին էին հասել և նույն ծավալով ու խորությամբ կարող էին կազմակերպել «յոթ ազատ արվեստների» ուսուցումը: Այդուհանդերձ, թեկուզ թերի ծրագրով նրանք բարձրագույն դպրոցների կարգավիճակով էին կազմակերպում ուսումնագիտական աշխատանքները:

Կիլիկիայի հայկական պետության գոյությունը մեծ պատվար էր Հայաստանի մտավոր կյանքի պահպանման ու զարգացման համար: Սերտ համագործակցություն գոյություն ունեւ մշակույթի բոլոր բնագավառներում՝ այդ թվում գիտակրթական ոլորտում: Հայրենի երկրում ստեղծագործական աշխատանքի դժվարությունների կամ անհնարին լինելու պարագայում նվիրյալներն անցնում էին Կիլիկիա, այնտեղ ապաստան ու նպաստավոր պայմաններ գտնում:

Հայաստանի բարձրագույն դպրոցների մասին լրիվ ու ամբողջական պատկերացում ունենալու համար անհրաժեշտ է թեկուզ որոշ զուգահեռներ անցկացնել Եվրոպայի ուսումնական հաստատությունների հետ: Ինչպես Եվրոպայում, այնպես էլ Հայաստանում բարձրագույն դպրոցները ծնունդ են առնում հասարակության հասունացման, զարգացման որոշակի աստիճանում՝ զարգացած միջնադարում: Այդ դարաշրջանում երկու դեպքում էլ կրթության ոլորտում զորեղանում է աշխարհականացման միտումը: Եվրոպական երկրների նման Հայաստանում ևս ուսման գործընթացի հիմքում ընկած էին «յոթ ազատ արվեստները»: Ինչպես այնտեղ, այնպես էլ Հայաստանում, մեծ նշանակություն էր տրվում անտիկ հեղինակների երկերի մեկնաբանմանն ու օգտագործմանը: Ինչպես Եվրոպայում, այնպես էլ Հայաստանում բարձրագույն դպրոցներում դասախոսում, ստեղծագործական աշխատանք էին կատարում երկրի նշանավոր գիտնականները:

Ուրիշ խոսքով Հայաստանում կրթությունն առաջադիմում էր եվրոպական երկրների ուսումնական գործընթացին համահունչ:

⁹ Նույն տեղում, էջ 51:

Եվրոպական երկրների համեմատությամբ կար մի էական տարբերություն: Այնտեղ կրթական կենտրոններն առաջանում էին երկրի խաղաղ պայմաններում, պետության օգնությամբ ու հովանավորությամբ: Հայաստանի հարևան Բյուզանդիայում 10-րդ դարի բարձրագույն հաստատություններից մեկում կայսրը դասախոսներին աշխատավարձ էր վճարում, իսկ ուսանողներին նյութական օգնություն ցույց տալիս¹⁰: Կոստանդնուպոլսի 11-րդ դարի համալսարանի իրավունքի ու փրկասփայլության դպրոցների տնօրենները բարձր աշխատավարձ էին ստանում և իրենց պաշտոնը վարում ցմահ¹¹:

Հայաստանում իրավիճակը միանգամայն այլ էր: Բազրատունյաց պետության անկումից, 11-րդ դարի կեսերից սկսած երկրում իշխում էին սելջուկ-թուրքերը և մոնղոլները, որոնք անխնա ավերածությունների էին ենթարկում երկիրը այդ թվում և կրթական կենտրոնները: Հայաստանում բարձրագույն դպրոցները հիմնականում ստեղծվեցին ու գոյատևեցին հենց դժվարին այդ ժամանակաշրջանում՝ 12-13-րդ դարերում: Ուսումնական գործը կազմակերպվում էր դժվարին ու ծանր պայմաններում, անապահով վիճակում: Ձեռագրերից մեկի հիշատակարանում կարդում ենք.

«Ես Մխիթար գրիչ սորա
Թուղթս անկոկ ու գրիչ չկա
Եւուրքս ցուրտ ու պարզկայ
Ջարդարինս բարձ ու կրակ չկայ
Դռներս չոր ու սպաս չկայ,
Եւ այս Գլաձորն ով գիտենայ
Ես յոյժ նեղած ու ճար չկայ
Գիրքս յերկար ու եզր չկայ
Եւ ես պանդուխտ ու վեղար չկայ»¹²:

Նման դժնդակ պայմաններում վարդապետարանների ստեղծումն ու ամեն տեսակ դժվարությունները հաղթահարելու գնով դրանց ստեղծագործական գոյատևումը բարձր արժեքի մասն կարիք ունի.

«Սովորական կարծիք է, - գրում է մեծանուն գիտնական Ն. Ադոնցը, - որ Բազրատունյաց անկումից հետո հայ կյանքը գահավիժում է և մտնում իր խավար շրջան, գրեթե կանգ է առնում դարեր շարունակ կաշկանդված իր գործունեության մեջ՝ շնորհիվ իր շուրջը բռնացող օտարոտի կարգերին: Սակայն հակառակ այդ ծանր կացության, որ ստեղծվել էր Հայաստանում և ամբողջ Առաջավոր Ասիայում հեռու են խուժած նոր ու բարբարոս ժողովուրդների հեղեղումով, անուրանալի է, որ հայ կյանքը չի մահացել: Հայ հեզ աշխատասիրու-

¹⁰ См. «Культура Византии (вторая половина VII-XII вв.)», Москва, 1989, с. 394-395:

¹¹ См. А. Т. Каждан, «Византийская культура», Москва, 1968, с. 65:

¹² Վ. Ալիշան, Միսական, Վենետիկ, 1893, էջ 135:

թյունը, շինարար ոգին և արթուն միտքը շարունակել են փայլփլել զանազան կենտրոններում, ինչպես մշտավառ ճրագներ, և հավետ կենսունակության ապացույցներ տվել քաղաքակրթական նորանոր ճիգերով ու ստեղծագործություններով»¹³ :

Հայաստանում կրթության ոլորտում կատարվող առաջադիմությունը ընթանում էր ամբողջ երկիրը համակած մշակութային ընդհանուր վերելքի պայմաններում: Այդ ահնառու վկայություն է լուսավորության նկատմամբ անվերապահ մեծ ձգտում ունենալու: Գիտակրթական առաջընթացն իրականանում էր ժողովրդի բոլոր շերտերի և ամեն մի դժվարության դիմակայող նրա նվիրյալ զավակների անձնագործ ջանքերով: Համընդհանուր այդ ջանքերի շնորհիվ շեշտվում, ամրապնդվում էր ազգային, ամուր հող ստեղծվում ձուլվելու վտանգին ընդդիմանալու: Լայն տարածում գտած գիտաուսումնական կենտրոնները՝ վարդապետարանները, կարևոր գործոն էին նախնիներից հաջորդ սերունդներին ավանդված ժառանգության վրա հենվելու, ազգային ոգին, ազգային ինքնությունը պահպանելու գործում:

Vladimir Barkhudaryan

The Medieval Clerical Colleges and National Identity

A number of clerical colleges were established in numerous cities and monasteries of Armenia and Cilicia. More prominent among them was the college of Gladzor, which has been called a university and was considered as “second Athens”.

The clerical colleges were very important. A cultural prosperity occurred along with the economy's, including the educational sphere, when the independence of Armenia was restored in the year 885. There were established high schools, clerical colleges, where “seven free arts” were taught. Besides being teaching places the clerical colleges were also scientific-creative centers that were headed by the well-known scientists of the time.

¹³ Գ. Կաթողիկոս Հովսեփյան, *Խաղբակյանը կամ Պռոշյանը հայոց պատմության մեջ*, Անթիլիաս-Լիբանան, 1969, էջ 462:

